ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ե. Չարենցը XX դարի գրականության ականավոր դեմքերից է՝ հայ նորագույն գրականության հիմնադիրն ու սկզբնավորողը: Նրա գրական հետաքրքրությունները ձևավորվեցին մի կողմից՝ նահիրյան հին քաղաքի տխուր իրականության ազդեցությամբ, մյուս կողմից՝ գրականության մեջ հանդես եկած անկումային հոսանքների ազդեցությամբ, որոնց նկատմամբ նա առանձնապես զգայուն էր: Վաղ շրջանի ստեղծագործություններում՝ «Հրո երկիր» (1913-1916), «Տեսիլաժամեր» (1915), «Ծիածան» (1916-1917), որոնք ունեն վառ արտահայտված խորհրդապաշտական բնութագիր, նա ստեղծեց խորհրդանշանների յուրահատուկ համակարգ՝ կրակ, արև, կապուտաչյա հայրենիք, կապույտ աղջիկ: 1913 թ. հրատարակվում է բանաստեղծի առաջին գիրքը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան», որում զգացվում է բանաստեղծական մտքի կապը ոճով ու բնույթով տարբեր հեղինակների հետ՝ սկսած ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ Ալբերտ Սամենից՝ վերջացրած Վ. Տերյանով:

Սիմվոլիզմի ազդեցությունը Չարենցի ստեղծագործությունների վրա պայմանավորված էր նախ նրանով, որ շրջապատող իրականությունը, մարդկային հարաբերություններն ու կյանքի տպավորության անմիջական զգացողությունն իրենց հետքն են թողել զգայուն բանաստեղծի մտորումների վրա, ինչը նրա պոեզիայում դարձել է մոտիվ: Բանաստեղծն արտահայտում է հայրենիքի նկատմամբ ցավի և թախծի, չիրականացած հույսերի ու այրող կարոտի զգացողությունները, որոնք հագեցած են սիմվոլիստական պոետիկայի աշխարհընկալմամբ: Չարենցն իր երազներն ու երազային տեսիլներն արտահայտելու համար «Ծիածան» ժողովածուում դիմում է գույների գեղարվեստական պատկերման սիմվոլիստական հնարանքին: Այդ գույները երեքն են («Երեք գույն կա երազային...»)՝ կապույտը, ոսկեգույնը և մանուշակագույնը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն խորհուրդը:

Չարենցյան բառապաշարը, գեղարվեստական պատկերային համակարգն ու բանաստեղծական արտահայտչական միջոցներն ավելի ակնառու ձևավորված տեսնում ենք հենց «Ծիածան» ժողովածուում: Գունային պատկեր-

ներում, կապակցություններում ամենասովորականը, սակայն, **կապույտ** բառն է իր հոմանիշներով (մանուշակագույն, երկնագույն)՝ գործածված մոտ հարյուր անգամ և՝ որպես մակդիր (աճական), և՝ որպես գոյական (հատուկ և հասարակ): Ինչպես տեսնում ենք, **կապույտը** նաև անձնավորված է.

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը – թախիծ.
Կապույտը – կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:
Կապույտը քրոջ աչքերի անհուն
Առավոտն է թաց:

Պետք է նշել, որ պատկերավորման այս երանգները զարգացան, ծավալվեցին և այլ որակ ստացան բանաստեղծի հետագա ստեղծագործություններում:

Չարենցի մի շարք բանաստեղծություններ ունեն անձնական ապրումի և կենսագրական տարրեր, որոնք բնորոշ են սիմվոլիստական պոեզիայի առանձնահատկություններին: Դրա վկայությունն է «Հրաժեշտի երեկոն» բանաստեղծությունը, որում քնարական հերոսը լցված է սիրո հույսի սպասումով: Սակայն նա կրկին դառնում է տրտում, որովհետև նրա հույսերը ցնդում, անէանում են, և հնչում են հրաժեշտի ղողանջները.

Ջինջ ճախրում են ղողանջները հորիզոնից – հորիզոն
- Ինչ տրտո՜ւմ է, կապույտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Այստեղ նկատելի է նաև դրամատիզմի առկայությունը, երբ այդ սերը տանջում, հոգեհան է անում բանաստեղծին՝ նրան թողնելով սպասման և երազի ճանապարհին: Այդ պատճառով էլ գրողի հոգին կարոտով է ապրում, որովհետև երազը նրան հուսախաբ է անում.

Երազներ կան, որ կարոտներ են միայն,
Լո՜ւյս կարոտներ, որ կանչում են կապույտում...

Կարոտը բանաստեղծի մոտ վերածվում է ցավի, և այդ ցավը դառնում է համատարած, որի միջից բանաստեղծն իր սիրուն ստիպում է ժպտալ, որպեսզի իր կարոտած սերը չհայտնվի Գողգոթայի ճանապարհին.

Հսկումների պահը սուրբ է. ժպտա', ժպտա',
մահացող քույր,
Որ չհանի՜ քեզ Գողգոթա այս կարոտը իրիկնային...

Չարենցի ստեղծագործական առաջին փուլի բանաստեղծական շարքերը թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ նորություն էին հայ գրականության մեջ:

«...Հայ գրականությունը իր միջով անց է կացնում սիմվոլիստական գեղագիտության որոշ դրույթներ, դրանք **գունավորելով ազգային-հայկական կյանքի բովանդակությամբ ու խնդիրներով**»,- գրել է գրականագետ Ս. Աղաբաբյանը (**Աղաբաբյան Ս.,** Եղիշե Չարենց, Գիրք առաջին, Եր., 1973, էջ 41): Ամենավառ օրինակը կարող են դառնալ հենց «Հրո երկիր» գրքի բանաստեղծությունները, որոնք ամբողջովին ցավի, թախծի և տագնապի արտահայտություններ են: «Հրո երկիր» շարքում բանաստեղծի աչքին է երևում հայրենիքը՝ երազների ու պատրանքների թևերի վրա՝ «Երկիրը հեռավոր», որովհետև այն դարձել էր արդեն «Հրի, մահի՛, ոճիրի՛ Երկիր».

Օ, այն չէ՛ր, այն չէ՛ր –
Երկիրը Հրի...
- Մահի՛, ոճիրի՛
Հուսահատ կանչեր...

Ակնհայտ է, որ սիմվոլիստական հոգեբանական պատկերավորումն ու ապրումներն առկա են բանաստեղծի տողերում, սակայն դրանք ստացել են համամարդկային և փիլիսոփայական երանգավորում: Անդրադառնալով Ս. Աղաբաբյանի մեկնաբանությանը, որն առնչվում է սիմվոլիստական շրջանի գեղագիտությանը, գրականագետը գրել է. «Չարենցի բանաստեղծական մկրտությունը զուգադիպեց ժողովրդի քաղաքական հույսերի խորտակման **ժամանակին**, ուր և ցայտուն հետագիծ թողեց սիմվոլիստական գեղագիտությունը»[1]:

1922 թ. գրված «Քամին» բանաստեղծության մեջ հեղինակը տվել է ժամանակաշրջանի քաղաքային կյանքի գեղարվեստական նկարագրությունը: Ահա այդ բանաստեղծությունից մի հատված.

...Փողոցները երկա՛ր,
Ու ծանձրալի, աշնան անձրևների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժա՛ն, անհրապույր, չարկամ,-
Որքա՛ն, որքա՛ն, որքա՛ն ահավոր են հիմա:
...Զրնգում են ահից պատուհաններն հնչուն,
Ու թռչում է քամին,- երկաթաթև թռչուն,-
Զարհուրելի, զազիր փողոցների միջով...

---

[1] **Աղաբաբյան Ս.,** Եղիշե Չարենց, Գիրք առաջին, Երևան, 1973, էջ 43: Aghababyan S., Yeghishe Charents, girq 1, Yerevan, 1973, ej 43:

Այսպիսով, սիմվոլիզմի գեղագիտական տեսությունը, արտացոլվելով Ե. Չարենցի վաղ շրջանի ստեղծագործության մեջ, ունեցել է արտահայտչական տարբեր եղանակներ: Այն Չարենցի պոեզիայում դրսևորվել է յուրովի՝ արտացոլելով XX դարի սկզբի պատմական և քաղաքական դեպքերի նկարագրությունները: Եվ պատահական չէր, որ 1917 թ. Ռուսաստանում բռնկված Հոկտեմբերյան հեղափոխության մեջ ներքաշված բանաստեղծը շուտով հրաժարվում է սիմվոլիզմի ուղղությունից՝ նախապատվությունը տալով գրական ասպարեզ իջած մեկ այլ ուղղության՝ ֆուտուրիզմին: Այդպիսով, սիմվոլիզմը Չարենցի ստեղծագործության մեջ դառնում է ավարտված մի փուլ, որը, սակայն, ճշտված և հաստատված էր պատմությամբ ու ժամանակով, գրականության զարգացման ընթացքով:

Չարենցը իսկական նորարար էր. նա հարստացրեց հայ գրականությունը նոր գաղափարներով, թեմաներով ու պատկերներով: Գրականության զարգացումը ցույց է տալիս, որ սիմվոլիստների պոետիկայի և աշխարհաըմբռնման հաղթահարման ընթացքը դժվարին ու բարդ էր: Այդ հաղթահարումն իրականացել է կյանքի անհերքելի, դաժան իրականության մեջ տեղի ունեցած հեղափոխական փոփոխությունների ազդեցությամբ: Մինչև 1915 թ. Չարենցը արդեն գրել էր բազմաթիվ բանաստեղծություններ՝ «Հայրենիքում», «Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար...», «Ո՞վ կհանդիպի, ո՞վ կբարևի...» և այլն, որոնցում արտահայտված են «թափանցիկ հեռուներին», «աստղային մութին» և «ջերմ արևին» ձգտող այն մարդու ապրումները, ով սփոփանք չի գտնում իրական կյանքում և դատապարտված է ապրելու երազների աղոտ աշխարհում:

Ե.Չարենցի ստեղծագործական կյանքում առանձնանում են նաև 1918-1921 թթ.՝ որպես իսկական «փոթորկի և գրոհի» շրջան: Կարճ ժամանակահատվածում նա ստեղծեց հեղափոխական ոգեշունչ էջեր՝ «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Երգ հայ ժողովրդի մասին», «Ամենապոեմ», ռադիոպոեմները, ինչպես նաև «Ողջակիզվող կրակ», «Ութնյակներ արևին» շարքերը և բազմաթիվ այլ բանաստեղծություններ, որոնք նշանավորեցին գրական-ստեղծագործական նոր փուլ:

Չարենցի ստեղծագործության այս նոր փուլը սկսվում է «Ողջակիզվող կրակ» (1918-1920 թթ.) շարքով, որի թեմաներն ու մոտիվները վկայում են ինչպես գրողի աշխարհայացքում, այնպես էլ նրա գեղարվեստական մեթոդի մեջ տեղի ունեցած էական փոփոխությունների մասին: Այստեղ աստիճանաբար ձևավորվում է բանաստեղծի հասարակական և գեղարվեստական

աշխարհայացքի հեղափոխական որակը: Ահա մի բանաստեղծություն «Իրիկունը» բաժնից.

Կապույտ կարոտը ոչինչ, մեզ ոչինչ չտվեց:
Մութ է խորհուրդը կյանքի, ու անհուն, ու մեծ:
Մութ է խորհուրդը կյանքի, բայց կյանքի մթում
Հազա՛ր հրդեհ կա հոգու ու հազար խնդում:
Ես հասկացա ու գիտեմ, որ աշխարհը մի
Ե'րգ է հնչեղ, հրաշունչ - հրաշունչ քամի...

Ակնհայտ է, որ «Ողջակիզվող կրակը» շարքի բանաստեղծությունները «Ծիածանից» տարբերվում են գեղարվեստական պատկերավորման միջոցների (ոսկեբոսոր քուրան, կարմիր արևը, վառվռող սիրտը և այլն) նոր համակարգով, որն օժտված է զգացմունքային ներուժով: Տվյալ շարքում առաջատարը հեղափոխական միտումն է, որը տարածվում է բանաստեղծությունների թե' գաղափարական բովանդակության և թե' նրանց գեղարվեստական յուրահատկության վրա:

«Սոմա» (1918) պոեմում օգտագործված պատկերները վերնագրից սկսած մինչև վերջին արտահայտությունը հիմնականում սիմվոլիկ են, խորապես հուզական ու բազմանշանակալից: Հրդեհի սիմվոլը ստացել է հեղափոխության՝ հինը կործանող և նորը ստեղծող համայնապարփակ իմաստ: Աչքի ընկնելով ռիթմական բազմազանությամբ, պատկերների վառվռունությամբ ու ինքնատիպությամբ՝ «Սոման» միաժամանակ լավատեսության խոր զգացումով է տոգորված: Չարենցը պոեմում դիմում է այնպիսի ծավալուն մետաֆորային պատկերների, որոնք դառնում են հասարակական կյանքի մեծ երևույթները բնութագրող խորհրդանիշներ: Այդպիսի մետաֆորներ են մայրամուտն ու արշալույսը. առաջինը խորհրդանշում է մեռնող հին աշխարհը, երկրորդը՝ նոր ծագող կյանքը: Հին քաղաքը իր կայարանով ներկայանում է որպես քաղքենի աշխարհի խորհրդանիշ: Պոեմում մարմնավորված աշխատավոր զանգվածները հրակարմիր իրիկնապահին կռվում են նույն այդ հին աշխարհի դեմ: Բանաստեղծը վառ գույներով է նկարագրում կայարանի գրոհումը և նրա գրավումը ամբոխների կողմից՝ արտահայտիչ պատկերներ ստեղծելու համար նրանց կռիվը ներդաշնակելով բնանկարի ու երգի հետ.

Ե'րգ էր սիրտը ամեն մեկի, երգ էր հայացքը
կրակոտ,
Վառվում էր սիրտը ամենքի, որպես կարմիր մի
առավոտ:

Ե՛րգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով
վառված-
Եվ երգելով կռվում էին ամբոխները խելագարված...

Այստեղ պատկերները վառ են ու խոսուն: Ժողովրդի այս երթը դեպի Արև հիշեցնում է Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի վերջին տողերը.

Եվ ոսկեփրփուր ծիրանին ուսին
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը,
Թռչում էր անդուլ՝ հաղթական ու վեհ,
դեպի արևը, անմահ արևը...

Պետք է նշել, որ մեկնակետը երկու բանաստեղծների մոտ նույնն է, սակայն վերջնակետը՝ տարբեր: «Ամբոխները խելագարված» (1919) պոեմում ընթերցողին հիացմունք են պատճառում բանաստեղծի մտքի զարմանալի թռիչքները և մեկը մյուսին իր գեղեցկությամբ չզիջող պատկերները, որոնց միջոցով նա ոչ միայն ներկան, այլև վերջինից բխող գալիքն է վիպերգում: Արևը նոր կյանքի խորհրդանիշն է: Արևի մեջ միշտ բովանդակվել է մարդկանց երազանքը գեղեցիկ կյանքի մասին: Ըմբոստացած Իսահակյանն էլ իր քարավանով գնում էր դեպի կյանքի մշտագո ակունքը՝ Արևը: Չարենցն իր պոեմում փառաբանում է զայրույթի ու ընդվզման հուժկու պոռթկումը, նրա անձնազոհության ու հաղթանակի վեհությունը: Պոեմն աչքի է զարնում էպիկական լայն շնչով, նկարագրվող դեպքերի էությունից բխող գեղարվեստական պատկերներով ու համեմատություններով:

«Ամբոխները խելագարված» պոեմում նորից հանդիպում ենք «Սոմայում» գործածված որոշ բառապատկերների՝ «խենթ ու խելագար», «վառվել», «երգ», «պար», «հուր», «շուրջպար», «ողջակիզվող ամբոխ», «մոխիր դառնալ», «ու հրդեհում պար են բռնել ամբոխները խելագար» և այլն: Գունային պատկերների ստեղծմանը մասնակցում են նաև արյուն (արնավառ, արյունալից, արնաքամ, արնագույն), հուր, կրակ (հրե, հրաբոսոր, հրակարմիր, հրաշուշան, կրակոտ, կրակված, կրակել) բառերը: Շառագունած, շիկնած երկնքի, շիկացած միջավայրի պատկերն ամբողջացնում են հրդեհ, թեժ, շող, ճառագայթ, լույս, բորբ, բորբոքել, վառ, վառվել, ողջակիզվել, փայլ, փայլել և այլ բառեր:

Չարենցյան պատկերները սկիզբ են առնում անցյալից և գունային են: Նրա մեծ նախորդն ու ժամանակակիցը՝ Վ. Տերյանը, անհուն մորմոքով գրել է.

Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ.

Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր, և սրտի հուր:
Ամեն մի միտք հիմա մի վերք,
Ամեն հայացք հատու մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր...

Հայաստանը դարձել էր դանթեական դժոխք, ինչը չէր կարող իր վճռական ազդեցությունը չունենալ գրական հուժկու քայլերն անող այնպիսի զգայուն հոգու վրա, ինչպիսին Չարենցն էր: Եվ հենց առաջին բանաստեղծություններում զգացվում է այս տխուր իրականության արձագանքը՝ հուր ու ավեր. «Հրո երկրի» պատկերները ծնում են տեսիլներ... Հայրենասեր բանաստեղծը ողբում է իր ժողովրդի բախտը, նրա խոհերը, ապրումները պտտվում են Նաիրիի ճակատագրի շուրջ, նա մորմոքում է ու մաքառում: Որոնումների ընթացքում արդեն որոշակիորեն ուրվագծվում է Չարենցի անհատականությունը, ծնվում ու ձևավորվում է նրան բնորոշ պատկերային միջոցների համակարգը՝ արևի տակ ողջակիզվել, իրիկնային ոսկի մշուշ, վառվում են աստղերը ոսկի, իրիկնային հրդեհ, արնոտ մուժ, կարմիր հրոտ ձեռքեր և այլն:

Չարենցի լավագույն ստեղծագործություններից է «Դանթեական առասպել» (1915-1916) պոեմը: Նշենք, որ հենց սկզբից էլ Չարենցն անտարբեր չէր իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Նա կամավորների հետ մեկնում է նաև ռազմաճակատ, անցնում Արևմտյան Հայաստանի տարածքով, տեսնում է մահ ու ավեր... Պոեմում դաժան սարսափների, ավերածությունների, մարդկանց անսփոփ վշտերի ու տառապանքների պատկերները հետևում են միմյանց, որոնք ընկել են Համաշխարհային առաջին պատերազմի իրադարձությունների ալեպտույտի մեջ: Նրանում բանաստեղծը տարբեր միջոցներով նկարագրում է դանթեական նոր դժոխքի, իրական կյանքի ցնցող ու զարհուրելի պատկերները.

Եվ ահա - կրկին մի քանի դիակ:
Եվ այստեղ ահա - վարսեր կանացի:
Իսկ այստեղ, արնոտ վերմակների տակ –
Չորցած փշրանքներ արնաներկ հացի:

...Իսկ այստեղ ահա մի ոսկրացած ձեռք:
Մարմինը չկա: Ընկած է անձայն:
Հետևում գտանք սրունքները մերկ,
Իսկ մի քիչ հեռուն - ատամներ ցիրցան:

Անհրաժեշտ է նշել, որ «Դանթեական առասպել» պոեմը լուրջ քայլ էր առաջին բանաստեղծությունների սիմվոլիստական մոտիվների հաղթահարման և գրական մտքի զարգացման ճանապարհին: Պատերազմական տպավորությունների անմիջական ազդեցության տակ գրված այդ պոեմը նոր որակ էր Չարենցի ստեղծագործության մեջ ոչ միայն թեմատիկ-գաղափարական առումով, այլև լեզվով ու ոճով, շատ կողմերով տարբեր նախորդ ստեղծագործություններից:

Գեղարվեստական պատկերների արտացոլման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն նաև Չարենցի «Աշնան երգերը», որոնք հիմնականում գրվել են 1934-1937 թթ., և մեզ համար որպես ուսումնասիրման աղբյուր հանդիսացել է բանաստեղծի դուստր, գրականագետ Անահիտ Չարենցի կազմած ժողովածուն[2]:

1934 թ. գրած «RÉSIGNATION» («Համակերպություն») բանաստեղծության մեջ Չարենցը, ինչպես ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ Պ. Վեռլենը, նրա երգերի չափով ու ոգով մրմնջում է իր մորմոքն ու թախիծը՝ առանց երես թեքելու ապագայի հանդեպ պայծառ օրերի սպասումից: Չարենցը վերը նշված ստեղծագործության մեջ պահպանել է բարձր բանականության ուժը և մարդասիրության, բարոյական պատասխանատվության զգացողությունը.

Որպես երգը Վերլենի՝
Հին ասոնանսով –
Նո՛այն տրտունջն է վաղեմի
Իմ հոգում այսօր: -
Մի՞թե այս հին տրտմության,
Մահո՛ւ պես անդուռ –
Այս մորմոքո՞վ քեզ գտա,
Օ, երգ իմ անտուն...

Այս պատկերներով դրսևորվում է բանաստեղծի հոգեվիճակի յուրահատկությունը: Չարենցը ընթերցողի առջև անմիջականորեն բացահայտում է իր բարոյական կերպարը, անհանգիստ ներաշխարհը՝ հոգեբանական խոր վերլուծությամբ և ցայտուն ինքնատիպությամբ:

Ուշադրության է արժանի նաև 1937 թ. գրված «Մայրամուտը» խորագիրը կրող բանաստեղծությունը՝ իբրև պոետի տրամադրությունների օրգանա-

---

[2] **Չարենց Ե.,** Անտիպ և չհավաքված երկեր, բնագիրը պատրաստեց և ծանոթագրեց Անահիտ Չարենցը, Երևան, 1983, 711 էջ: Charents E. Antip ev chhavaqvac erker, Yerevan, 1983, 711 ej:

կան պատկերացում, անդրադարձումը՝ բնության համապատասխան գույների և նրբերանգների զուգակցման միջոցով: Այդ պատկերը յուրովի շարունակությունն է նախորդ բանաստեղծությունների մոտիվների՝ որպես մի խորիմաստ ռեալիստական ընդհանրացում: «Մայրամուտ»-ի մեջ առանձին մտքեր իրական-զգայական բնույթ են կրում.

Մառ՝ մորմոքում է Մայրամուտը –
Ու մգլահոտ է մովից մաղում:
Մարում է մուժը մթնշաղում,-
Մառ մորմոքում է Մայրամուտը...
Մխում է մարխը: Մարդը: Մութը:-
Մգլել է միրգը մեր մաղախում...

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծության մեջ ստեղծվել են համապատասխան գույներ և մետաֆորային փոխաբերություններ, որոնք աստիճանաբար վերածվում են կենսական դրամայի:

1937 թ. սկզբներից բանաստեղծի նկատմամբ ուժեղանում է հալածանքը: Երկրում ծավալվող քաղաքական արյունալի իրադարձությունների մեջ նա առավել ուժեղ է զգում մահվան ուրվականի մոտիկությունը: Դրա վկայություններն են նույն թվականին գրված տրիոլետները և «Մայրամուտի երգը», որոնցում բանաստեղծն արտահայտում է իր ծանր ապրումները:

«Աշնան երգերի» շարքում հանդիպում ենք բանաստեղծի կյանքի պատկերավորման բազմաթիվ հուզաշաղախ դրվագների, որոնք նույնպես լի են գեղարվեստական միջոցների նկարագրություններով: Գրողի համար մանկության աշունը մնացել էր արդեն տարիների հեռվում, իսկ իր օրերի աշունը պատված էր մշուշով ու ցրտով.

Աշունը մշուշ է մանում իր մաքուր և բարակ թելով,
Եվ անձրևը արցունքի նման ցուրտ տողեր շարում դակտիլով...

Աշունը, որ բանաստեղծին երևացել էր նաև «շքե՛ղ ու հեզ», աստիճանաբար դառնում է զառանցանք՝ վերածվելով «ցնծուն տագնապի»: Աշնան այս մոլի նկարագրությունն այն աստիճան է ուժգնանում, որ տապից ծառերն անգամ սկսում են մորմոքալ: Մարդկային կյանքն էլ, ավա՜ղ, ունի իր աշունը, այսինքն՝ իր ավարտը, և բանաստեղծը, այդ աշունը համեմատելով իր ապրած կյանքի հետ, գրում է.

Եվ ի՞նչ են նրանք շափշափում
Ցնծությամբ այդքան անիմաստ,
Այդ ի՜նչ են խնդագին ծափում...

Ա՜խ, թերևս այն, որ տապում
Ծառերի մորմոքի – հենց հիմա
Իմ կյանքն է տագնապում մերձիմահ...

Չարենցի տագնապը նաև մի յուրօրինակ մտահոգություն է՝ անցած ճանապարհը վերագնահատելու, և այդ մտահոգության ելքը բանաստեղծը դիտում է իբրև անողոք և անարդար կյանքի մշտնջենական շրջապտույտ.

Երբ գալիս է տխրությունն աշնան,
Օ, թո'ղ ոչ մի հասկ չըպանծանա
Իր վեհությամբ անցյալ,-
Երբ արդեն տերև է թոշնած...

Սակայն, որքան էլ «ցոլացող արևը» աշնանային է, այդուհանդերձ բանաստեղծի տեսանկյունից և ընթերցողի համար աշնանային արևը ընկալվում է որպես կյանքի խորհուրդ: Եվ ապագայի հանդեպ այդպիսի լավատեսական տրամադրությունն էլ բանաստեղծը գրական առաջնորդի իր դիրքերից մաղթում է գալիք սերունդներին.

Այդ աշնան ա'րևն է ցոլցոլուն –
Ցոլցոլում ցոլքով հուրհուրան...
Այդ աշնան ա՜րևն է ցոլում
Այգիների վրա...

Այսպիսով, Չարենցի ստեղծագործություններում գեղարվեստական պատկերավորման միջոցները հարուստ են ու գունագեղ, որոնց համակողմանի մեկնաբանումը մեկ հոդվածի սահմաններում անհնար է սպառել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ բարդ և հետաքրքրական թեմաներից մեկին՝ գեղարվեստական պատկերավորման միջոցների բացահայտմանը, որոնք բանաստեղծը արտահայտել է գրական ինքնատիպ եղանակներով, հասարակական կյանքը բնութագրող եզակի խորհրդանիշներով:

Բանաստեղծի գրական հետաքրքրությունները ձևավորվել են մի կողմից՝ նաիրյան հին քաղաքի տխուր իրականության, մյուս կողմից՝ գրականության մեջ հանդես եկած անկումային հոսանքների ազդեցություններով, որոնց նույնպես անդրադարձել է տողերիս հեղինակը:

Բանալի բառեր - Եղիշե Չարենց, գեղարվեստական պատկերավորման միջոցներ, գրական ինքնատիպ եղանակներ, գրական հետաքրքրություններ:

СИСТЕМА ХУДОЖЕСТВЕННЫХ И ОБРАЗНЫХ СРЕДСТВ В ТВОРЧЕСТВЕ ЕГИШЕ ЧАРЕНЦА

НАРЕК СУКИАСЯН

Данная статья посвящена одной из сложных и интересных тем в творчестве Егише Чаренца – раскрытию образных и художественных средств, которые писатель выражал оригинальными литературными способами и которые характеризуют общественную жизнь единичными символами.

Литературные интересы поэта сформировались с одной стороны в печальной действительности наирского старого города, с другой – под влиянием упадочных направлений в литературе.

Ключевые слова - Егише Чаренц, образные выразительные средства, оригинальные литературные способы, литературные интересы.

THE SYSTEM OF FICTIONAL DESCRIPTIVE IMAGERY IN YEGHISHE CHARENTS CANON

NAREK SOUKIASYAN

This article is dedicated to one of the complicated and interesting themes of the Yeghishe Charents' canon, discerning the vehicles of descriptive imagery, which the poet has expressed in remarkable literary means, by unique symbols, characterizing public life. The author of the article has also referred to the literary interests of Charents, which are shaped by the influence of the sad reality of the old city, Nairi on the one hand and by the effects of declining tendencies prevailing in literature on the other.

Key words – Yeghishe Charents, vehicles of descriptive imagery, notable literary means, literary interests.